Հաշվետվություն

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության մաքսային գործառնությունների սպասարկման թիվ 1 բաժնի գլխավոր մաքսային տեսուչ Արման Հարությունյանի և նույն վարչության մաքսային գործառնությունների սպասարկման թիվ 7 բաժնի ավագ մաքսային տեսուչ Հրանտ Մաթևոսյանի՝ 2024 թվականի մայիսի 26-ից 28-ը ներառյալ Ղրղզստանի Հանրապետություն (ք. Բիշքեկ) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը

Արման Հարությունյան - ՀՀ ՊԵԿ արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության մաքսային գործառնությունների սպասարկման թիվ 1 բաժնի գլխավոր մաքսային տեսուչ

Հրանտ Մաթևոսյան - ՀՀ ՊԵԿ արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության մաքսային գործառնությունների սպասարկման թիվ 7 բաժնի ավագ մաքսային տեսուչ

2. Գործուղման վայրը և ժամկետները

Ղրղզստանի Հանրապետություն, քաղաք Բիշքեկ, 2024 թվականի մայիսի 26-ից 28-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ձեռնարկատիրական գործունեության զարգացման դեպարտամենտ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի համար էր նախատեսված գործուղումը)

Գործուղման նպատակն էր մասնակցել «ԵԱՏՄ երկրներում կեղծարարության դեմ պայքար. Ղրղզստանի Հանրապետությունում աշխատանքի առանցքային միտումները և պրակտիկ առաջարկները» խորագրով աշխատանքային հանդիպմանը, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի, ԵԱՏՄ անդամ պետությունների մտավոր սեփականության իրավունքի

պաշտպանության բնագավառի իրավասու պետական մարմինների և ապրանքային նշանների իրավատեր Եվրասիական և արտասահմանյան ընկերությունների ներկայացուցիչների միջև համագործակցության և փորձի փոխանակման միջոցով ընդհանուր խնդիրների և մարտահրավերների առավել արդյունավետ լուծման ուղիների նախանշումը, ինչպես նաև ներկայացնել մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում:

5. Քննարկված թեմաները

Հանդիպման ընթացքում քննարկված թեմաներն են՝

ա) մտավոր սեփականության իրավունքի պաշտպանությունը ԵԱՏՄ տարածքում, ներկայիս մարտահրավերները,

բ) իրավակիրառ փորձը, խնդիրները և հաջողված լուծումները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Սեմինարի ընթացքում ներկայացվել է ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների պաշտպանության գործիքակազմի, կեղծված ապրանքների ներմուծումը կանխարգելող վարչական լծակների բացակայության, խնդրի սոցիալ-տնտեսական ասպեկների, տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության սկզբունքների լույսի ներքո իրավատիրոջը տրամադրվող օժանդակության, այդ ոլորտում տնտեսվարողների և սպառողների իրավագիտակցության և իրազեկվածության մակարդակի բարձրացման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը համընթաց մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում մերօրյա մարտահրավերների վերաբերյալ ներկայիս իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում:

Հանդիպմանը ներկայացվել է նաև՝

ա) մտավոր սեփականության իրավունքի խախտումների հակազդման ոլորտում Ղրղզստանի Հանրապետության օրենսդրությունը (փոփոխություններով և լրացումներով) և դատական պրակտիկան,

բ) կեղծված ապրանքների ներմուծման դեմ պայքարը Ղրղզստանի Հանրապետության մաքսային սահմանին,

գ) իրավատերերի իրավունքների պաշտպանության ոլորտում Ղրղզստանի Հանրապետության հաջողված գործերը. «Polaris» ապրանքանիշ,

դ) ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավակիրառ փորձը Ղրղզստանի Հանրապետությունում,

ե) կեղծված ապրանքների տարածման դեմ պայքարի գործիքակազմը ներկայիս իրավական դաշտում. «Apple» ապրանքանիշ,

զ) «LADA» մակնիշի ավտոմեքենաների ավտոպահեստամասերի անօրինական արտադրության և շրջանառության դեմ պայքարում «Автоваз» բաժնետիրական ընկերության կողմից ձեռնարկվող միջոցառումները,

է) հեղինակային իրավունքի պաշտպանությունը Ղրղզստանի Հանրապետությունում,

ը) թվային միջավայրում մտավոր սեփականության իրավունքի պաշտպանությունը,

թ) բիզնեսի փոխգործակցության առանձնահատկությունները իրավապահ մարմինների հետ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Մասնակիցները պատրաստակամություն են հայտնել առաջիկա հնարավոր հանդիպումների ընթացքում նախանշված խնդիրները նույն ձևաչափով ավելի մանրամասն քննարկելու և հաշվառելու վերաբերյալ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Հանդիպմանը մասնակցությունը հնարավորություն տվեց ծանոթանալ մտավոր սեփականության իրավունքի արդի խնդիրներին և դրանց հնարավոր լուծումներին, տեղեկատվություն ստանալ ԵԱՏՄ անդամ երկրների կողմից կիրառվող փորձի վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականության իրավունքի ոլորտում ներկա իրավիճակը: Փորձի փոխանակումը, ոլորտային խնդիրների վերաբերյալ ընդհանուր պատկերացումների զարգացումը, մտավոր սեփականության իրավունքի խախտումները ավելի խորքային ուսումնասիրելու հնարավորությունը կնպաստեն

կեղծված ապրանքների շրջանառության դեմ պայքարում մաքսային ծառայողի օրենսդրությամբ սահմանված լիազորություններից բխող գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացմանը:

Հաշվի առնելով, որ կեղծված ապրանքների արտադրությունն ու շրջանառությունը մեծ վնաս են հասցնում երկրի տնտեսությանը՝ նպաստելով նաև ստվերային տնտեսության աճին, ինչպես նաև այն, որ պայքարը արդյունավետ չի կարող լինել լոկալ (մաքսային հսկողության) միջոցներով, պատճառահետևանքային կապը բացահայտելու և համալիր լուծումներ գտնելու նպատակով համոզմունք է ձևավորվել խնդիրները վերհանել այս ձևաչափով՝ իրավատերերի և մտավոր սեփականության իրավունքի բնագավառում իրավասու մարմինների հետ ակտիվ համագործակցելով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Արման Հարությունյան

Հրանտ Մաթևոսյան

30.05.2024թ.